

**ԹՈՒՐԲՕ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐՇԱՒԱՆՔԻ ՔՍԱՆԵԻՆԻՆԳԱ-  
ՄԵԱԿԸ**

**1880—1905**

(Նիւթեր հայոց նորագոյն պատմութիւնից)

**I**

Թուրքո-քրդական նոր դէպքերը.—Մի քառորդ դար առաջ.—Գործեր և գործիչներ.—Ներսէս պատրիարք, Խրիմեան Հայրիկ, Կաթարական.—Caplan E. Clayton.—Վանայ Ալբանացի վալին.—Շէմզդինեան և շէյխ Իբրաղուլան.—Մար-Շիմոն.—Սիմոն Չիլինդերեան.—Ուղեւորութիւն դէպի Օսմանեան Բիւրդաստան:

Ատրպատականի Թուրքո-պարսկական սահմանագլխի վրայ այս օրերս տեղի ունեցող դէպքերը սկսել են ուշագրաւ լինել և քաղաքական հանգամանք ստանալ: Թուրքո-քրդական այդ խլրտուճները ներկայ աղէտալի օրերում մեզ հայերիս համար էլ մեծ կարևորութիւն ունենալով՝ արժէ պատմական մի հայեացքի առարկայ դարձնել այդ կրկին անգամ բռնկուած լուրջ խնդիրը:

Մօտաւորապէս 25 տարիներ անցել են այն թուականից, երբ 1877/78 թ. ռուս-թրքական վերջին պատերազմի հերոսներից Շէյխ Իբրաղուլանը առաջին անգամ ըստ հրահանգի Սուլթան Համիդի տասնեակ հազարներով սիւննի քրդերից բաղկացած մի ստուար ըաշի-ըողուզ բանակի գլուխն անցած Ուրմիոյ կողմից սահմանը խուժեց և ուղղակի առաջ արշաւելով պաշարեց այդ հինաւուրց քաղաքը:

Պիտի այստեղ յիշել որ այդ ժամանակ Կ. Պոլսում պատրիարքական աթոռի վրայ բաղմած էր այնքան արժանաւորապէս Ներսէս Վարժապետեանը, իսկ նրա ներկայացուցիչն էր Վասպուրական աշխարհում Խրիմեան Հայրիկը: Եւրոպական երկու մեծ պետութիւններից՝ Ռուսիան և Անգլիան՝ դեռ նոր նշանակել էին իրանց լաւագոյն ներկայացուցիչներին, որպէս մնայուն հիւպատոսներ, հսկելու ՅԷ-րդ աղէտալի և չարաբաստիկ յօգուածի իրագործուելու մասին. դրանք՝ հին հայազգի ֆեարուար, 1906.

տոհմային ազնուական գնդապետ Կոստանդին Կամսարականը և անգլիացի Գէրտըն Էմիլիուս Գլէյթըն, երկուսն էլ ըստի բուն նշանակութեամբը ընտիր, ազնիւ և իրանց պաշտօնի բարձրութեան վրայ կանգնած մարդիկ, որոնք չէին դադարում գիշերցերեկ աշխատել հայ ժողովուրդի տխուր և տառապալի վիճակի բարուղիները մասին. որովհետեւ մեծ սովի տարին էր այն: Զմուռնանք այստեղ յիշել նաև անցողակի կերպով որ Վասպուրականի ընդհանուր նահանգապետն էր Շքոտարլի Հասան Բաշա Ալբանեացին, որը դարիս սկզբում օսմանեան պետութեան Ալբանիոյ մտիրապետութեանը դէմ ապստամբուելով՝ յետոյ պարտութեան մատնուած՝ իր ամրոցը իր ամբողջ բնակիչներով օդը հանող հաշակաւոր Դէրէ-դէլէնլի Ալի Բաշայի ցեղից լինելով, դէպի օսմ. սուլթաններէ գահը խոր ատելութեամբ տոգորուած մի մարդ էր, և իբր աքսոր ուղարկուած էր Վան: Դա բաց է ի բաց մի հայասէր պաշտօնեայ լինելով ամենայնիւ աշակցում էր հիւպատոսների մարդասէր ջանքերին՝ ժողովրդեան թշուառ վիճակը ըստ կարելոյն ամօքելու, և կարելի է ասել որ նրա օրով հինաւորաց հարստահարութիւնները ու զրկանքները, գոնէ Վասպուրական կրկրում, բաւականաչափ զբաղուած էին, իսկ նրանից յետոյ Վանը այլևս մի բարեխիղճ թուրք պաշտօնեայի երեսը չտեսաւ:

Այնտեղ Շէմզդինանում\*) (թիւրքօ-պարսկային սահմանագլխի վրայ), որ Վանայ ընարդձակ կուսակալութեան հեռաւոր մի խուլ ու խաւար անկիւնն էր կազմում այն ատեններ, հաստատած էր Շէյխ Իրադուլլահը իր ընակութիւնը՝ վայելելով ամբողջ Հաքիարի գաւառի բոլոր ազգաբնակչութեան յարգանքը ու համակրութիւնը: Մանաւանդ մեծ պատերազմից յետոյ (1877—78) նրա գիւղը մի օջաղ, ազգային մի սրբավայր էր դարձել բոլոր քրդերի համար, որոնք հեռուից և մօտից խմբովին դիմում էին նրան իրանց վէճերը կարգադրելու, հաշտեցնելու նրանց՝ տեղային կռիւներում կայլն կայլն: Շէյխը նոր էր վերադարձել իր դէպի Մէքկէ արած ուխտադնացութիւնից և անցնելով Կ. Պոլսից արժանացել էր նա Սուլթան Համիդի ընդունելութեանը ու ընծաներին, աւելցնենք՝ նաև հրահանգներին, քանզի համիլամական տէնդէնցիան արդէն սկսել էր այնատեններ զօրանալ և տիրապետել Համիդի սրտում, իբր միակ միջոց օսմանեան խարխուլ գահը ամրապնդելու՝ հանդէպ եւրոպական անախորժ միջամտութեանց և մանաւանդ անվերջ ու անվախճան ըէֆօրմիների անիծեալ ծրագրերներին:

\*) Շէմզդինանի մասին տես «Մուրճ» 1905 թ. № 5—8.

Հանդիսաւոր շքով Շէյխը մուտ գործեց Վան և ապա ուղևորուեց Շէմզդէինան: Իհարկէ դա մեծ նշանակութիւն ունեցող անցք էր քրդերի համար և մեծ ուխտադնացութիւն սկսուեց դէպի այդ անկիւնն: Քրդերի արտասովոր համախմբումից իրանց պետի մօտ ասորոց կաթողիկոս Մար Շիմոնը անհանգստացած և յիշելով միկնոյն ատենը 1842 թ. մեծ ջարդերը քուրդ ցեղապետ Բէզըր-խան ըէկին ձեռամբ կատարուած, փոյթ էր տարել անմիջապէս տեղեկագիր ուղղել Ռուսաց և Անգլիացոց կօնսուլներին, ինչպէս նաև Հայոց Առաջնորդին, ուշադրութիւն հրաւիրելով այդ հանգամանքի վրայ: Բանը հաղորդուեց Կ. Պոլսի ղեսպաններին և Ազգաին Պատրիարքարանին: Անգլիական ղեսպան Լորդ Դիւֆէրին հեռագրով հրահանգ տուեց Գէփթըն Գլէյթընին անմիջապէս ուղևորուել Շէյխի մօտ և անձամբ ստուգել գործերի դրութիւնը Շէմզդէինանում. իսկ պ. Կաթարական բաւական համարեց Քիւղիւկչի Սիմոն Զիլինգարեացին (որ այդ ժամանակ Տրապիզոնից հասել էր և Շէմզդէինան էր գնում ընկուզի ծառերի վրայ գտնուած ուռերը կտրելու գործով) յանձնարարել՝ խնդիրը ուսումնասիրելով մի տեղեկագիր կազմել և ուղարկել նրան: Յօդուածագիրս էլ, որ ասուորական գործեր ունենալով Քրդաստան պէտք է գնայի, օգտուելով պատեհ առթից, անգլիական հիւպատոսի ապահով քարավանին միացայ և մեկնեցինք Վանից:

## II

Ողաբ.—Բաշկալա.—Կայծակը վարդապետը.—Շէյխի մասին.—Քոչանէս —Մարշիմոնի մօտ.—Ո՞վ է քուր ջարդերի բուն հեղինակը.—Տորիներ և Վիգերի քաղաքակնութիւնը.—Անգլիական միսիան Ասորոց երկրում:

1880 թուականի ամառն էր, երբ վերջին հրաժեշտի ողջոյններ փոխանակելով ընտանեացս և բարեկամ ու ծանօթների հետ՝ ճանապարհ ընկանք դէպի Բաշկալայ աւանը, որ Վանէն իբր 18 ժամ հեռաւորութեամբ Հաքիարի (Աղբակից հարաւ) նահանգի գլխաւոր կեդրոնն է 6 կամ 7 հարիւր տներով, հայ, քուրդ և հրէայ: Ծանապարհը տնցնում է հինաւուրց Անձևացիաց գաւառով (այժմ Ողաբ գաւառը), ուր աջ ու ձախ երեւում են ցան ու ցրիւ հայութեան անցեալ փառքի ու կուլտուրայի մշակութիւնը: Բնակիչները, կիսաքանդ ամրոցներ ու պարիսպներ վանքերի ու եկեղեցիաց փլատակներով, գիւղերի և աւանների աւերակներ, խոշոր խաչաքարերով զարդարուն գերեզմանոցներ և այլն և այլն: Անցնելով Ողաբ գիւղի վրայի Գիւլում-Սա-

թուն կամուրջից, որ մի հինաւորաց քարաշէն գեղեցիկ շինուածք է ի յիշատակ Անձեաացեաց մի հայ իշխանունու բարեգործութեան, մենք վերջապէս հասնում ենք Սոշաք գիւղը, որ աւազակ քուրդերի մի որջ է, ունենալով ամեն յարմարութիւն անցու դարձ անող քարվաններին, ճամբորդներին կողոպտելուն:

Հասկացնելով հիւպատոսին գիւղի անապահովութեան մասին, նա տեղական միւտիւրից (պրիստաւ) գիշերապահներ պահանջեց և մենք հանգիստ քնել կարողացանք: Միւս օրը Ջուխի կէտուկը բարձրանալով երեկոյեան հասանք Բաշկալա: Տեսակցելով հայոց առաջնորդ Յովհաննէս վարդ. Բազունիի (Կայծակ) հետ, որ աշալուըջ և քրդական գործերին լաւ հմտութիւն ունեցող մի մարդ էր, մենք տեղեկացանք որ իսկապէս Շէյխը գաղտնի հրահանգներ է բերել Պոլսից և մի ինչ որ խուլ շշուկներ կային քրդական շրջաններում՝ ի մօտոյ արշաւանքի նման մի բան սկսելու, բայց թէ ում վրայ, հայոց թէ ասորոց—դեռ չի որոշապէս յայտնուում:

Վարդատետը խորհուրդ տուեց կոնսուլին նախ գնալ Մար-Շիմոնի մօտ, որից աւելի ստոյգ տեղեկութիւններ կարելի էր ստանալ գործի դրութեան մասին: Ուստի և որոշեց մարշալուտը փոխել և միւս օրը մենք ուղևորուեցինք Ջուլամէրկ, որի մօտն է ասորոց կաթողիկոսի բնակուած գիւղը Քոչհաննէս: Ջար դետի զառիվայրին բարձրութեան վրայ շինուած այս աւանը 200 տուն զուտ ասորի բնակիչներով գեղեցիկ մի տեսարան է ընծայում իր բարձրաբերձ բարդի անտառներով և սիրուն, մաքուր խրճիթներով. իսկ կաթողիկոսարանը բաւականին վայելուչ մի մեծ երկյարկանի քարաշէն տուն է, ուր մենք հիւրնկալուեցինք Մար-Շիմոնի հրամանով և պարտ ու պատշաճ պատիւներով: Այս լեռնական հոգևորականի պարզ և անպաճոյճ կերպարանքը և նիստ և կացը մեծ տպաւորութիւն թողեց մեզ վրայ: Նա ոչ սինող ունէր իր կողքին, ոչ պրովուրոր, ոչ քարտուղար և ոչ էլ գանձապետ. միայն մի քանի բարձրահասկ կտրիճ երիտասարդներ կային նրա շուրջը, որոնք զինուած էին սպիտակ կոթերով քրդական խանչաւներով, և մեծ երկիւղածութեամբ թիկնապահութիւն էին անում իրանց եկեղեցական պետին: Նա խօսակցում էր մեզ հետ թուրքերէն, իսկ հիւպատոսի թարգմանը նրա ասածները հաղորդում էր անգլերէն: Հարցը քրդական խլրումների մասին էր իհարկէ: Մեծ եղաւ մեր զարմանքը երբ Մար-Շիմոն յայտնեց որ շէյխը նրան մի նամակով հրաւիրել էր մօտ օրերում իր մօտ տեսակցութեան և խորհրդակցութեան մի շատ կարևոր գործի մասին,

որին շուտով պէտք է ձեռնարկուէր բարձրագոյն հրամանով և հրահանգով:

— Իսկ դուք ի՞նչ պատասխանեցիք նրան, հարցրեց հիւպատոսը կաթողիկոսից:

— Ոչինչ, միայն սայլափ թէ մենք հինգ մէլիքներ ունենալով, որոնք կազմում են ազգային խնամակալութիւնը, հարկ է նախապէս դիմել նրանց, որպէսզի ժողովի միջոցով որոշուի նրա մօտ գնալու խնդիրը:

— Բայց ձեզ չի՞ թւում որ ձեր այդ պատասխանը կարող էր ուղղակի վիրաւորել Շէյխին և գրգռել նրա թշնամութիւնը ասորոց դէմ, շարունակեց կոնսուլը:

— Այդպիսի մի բան կարող է պատահել, սակայն ես առանց մէլիքների գիտութեանը կարող չէի ինքս վճռել թէ հարկ է գնալ թէ ոչ: Յետոյ այս էլ կայ որ 1842-ին մեր ազգը սոսկալի կերպով տուժեց քրդերի կողմից եկած այդ տեսակ հրաւերներին ականջ կախելով, որը ձեզ քաջ յայտնի պէտք է լինի կարծեմ, պատասխանեց Մար-Շիմոն:

— Ի՞նչ կարող է լինել Շէյխի նպատակը քրդերին իր մօտ համախմբելով, հարցրեց կրկին հիւպատոսը:

— Անկասկած նա որեւէ դիտաւորութիւն պէտք է ունենայ մի արշաւանք գործելու ի վրէժ այն անյաջողութեանց, որ նա կրեց Ջալալէդդինի հետ միասին անցեալ պատերազմում, սոսկալի ջարդ ուտելով Բայազիդում դեներալ Տէր-Ղուկասովի բանակից:

— Արշաւանք գործել, բայց դէպի ո՞ւր և ո՞ւմ վրայ:

— Ինձ համար բոլորովին պարզ է որ նա կը յարձակուի Վանայ վրայ. Ջալալէդին և Իւրադուլլահ Բայազիդ գնալուց առաջ Վանում ուխտել էին, յաղթական վերադառնալիս պատերազմի դաշտից, այդ մեծ հայաշատ քաղաքը սրի և թալանի ենթարկելով հիմնայատակ քարուքանդ անել: Բայց հակառակը լինելով յաղթահարեալ ու գլխակոր եղած մաղապուրծ յետ դարձան, ուր (Վանում) Սուլթանի յատուկ հրամանով հասած բաշան Ջալալէդինին թունաւորելով սատկցուց, իսկ Իւրադուլլահին էլ հրահանգ տրուեց՝ Մէքէէ ուխտի գնալու: Ահա այդ վրէժըն է որ նա այժմ ուզում է կատարել:

— Բայց չէ՞ որ այդ դէպքում նա ուղղակի կառավարութեան հետ դէմ առ դէմ գործ կ'ունենայ քանի որ Սուլթանը չի կարող նրան թոյլ տալ իր հպատակներին կոտորելու:

— Ընդհակառակը, ես բոլորովին վստահաբար կարող եմ ասել ձեզ, պ. հիւպատոս, որ Սուլթանի կառավարութիւնը նրան չարգելելով հանդերձ, ուղղակի կամ անուղղակի էլ

կ'օգնէ Շէյխին իր այդ վատ և սոսկալի նպատակը իրագործելու: Ո՞վ էր մեզ՝ ասորիներին 1842-ին չարաչար կոտորել տուողը—Սուլթան Մէջիդը. ով էր 1862-ին Լիբանանում Մայօնիթ քրիստոնեաներին ու Կիլիկիայում հայերին ջարդել տուողը—Սուլթան Ազիզը. վերջապէս ով էր դեռ երկու տարի առաջ Ռումէլիայում (Բուլղարիա) տասնեակ հազար քրիստոնեաներին արիւն արցունքի գետերու մէջ ընաջինջ անել տուողը—Սուլթան Համիդը. դուք տեսնում էք, ուրեմն, պ. հիւպատոս, որ Օսմանեան սուլթանների բնորոշող քաղաքականութիւնն է ջարդել, կոտորել և հետզհետէ բոլորովին ընաջինջ անել իրանց քրիստոնեայ հպատակ բոլոր ազգերին էլ հաւասարապէս: Բըրդերը առաջ հինաւուրց շէշխանէ հրացաններով կոտորում էին մեզ անդէն, անպաշտպան քրիստոնեայ հպատակ ազգերին և ժողովուրդներին, իսկ այժմ նրանք զինուած են յոտից ցզլուխ այնալի, մարտինի և 16 հարուածանի վէնչեստրը փառաւոր հրացաններով. ով տուեց նրանց այդ նոր, եւրոպական կատարելագործած ընտիր զէնքերը, ով, եթէ ոչ Սուլթան Համիդը՝ և թ'նչ նպատակի համար. աւելորդ է ասել:

Հիւպատոսը որ օսմանեան պետութեան ջատագով ու պաշտպան Բիկոնսֆիլդեան պահպանողական կուսակցութեան յարած մի թունդ տորի էր, մտայուզուեց և սկեց բեխերը ոլորել ու մօրուքին շոյել. տեսնելով որ աշխարհի հեռաւոր խուլ ու խաւար անկիւններում ապրող այս լեռնական եկեղեցականը այնպէս պարզ և ազդու մի ճառով լուսաբանել էր օսմանեան սուլթանների իսկզբանէ անտի հետեւած արիւն-արցունքի քաղաքականութիւնը, որ այնքան ձախորդ, դժբաղդ և մահաբեր հանդիսացել էր Արեւելքի հինաւուրց քրիստոնեայ, խաղաղ, կոլտուրական բազում ազգերին ու ժողովուրդներին և այնքան անպատուարեր ու անտանելի եւրոպական մեծ, քաղաքակրթուած և հզօր ազգերի և պետութեանց անուան ու համբաւին, և այնքան յանդիմանութիւն ու նախատինք էր բերում նրանց անզգայ սրտերին ու մեռած, թմրած խղճին եթէ, ունէին:

Մի ակնթարթում նա ըմբռնեց քրդական խլրտումների և շարժումների բուն իսկ իմաստն ու նշանակութիւնը, նպատակն ու ահռելի հետեւանքները, և նա սթափուեց, զարդնեց, որպէս խորը քնով խմբացնող մի մարդը, որի փակուած աչքերի վրայ է ընկնում յանկարծ կիզիչ արեւի մի լուսասփիւռ ճառագայթը, եւ ես կարող եմ ասել որ վիկտորիա թագուհու այդ ազնիւ ներկայացուցիչը խորապէս խղճահարուելով այն օր ապաշխարեց, և նա թքեց տարիների հետեւած լիրբ, անխիղճ,

քաղաքականութեան երեսին ու սկսեց ազատական կուսակցութեան յարել, որի նպատակն է տապալել իսլամական այս ամենի աշխարհաւեր բռնապետութիւնը, համաձայնութիւն կայացնելով Ռուսիոյ հետ, որի անդադար կրկնուող ջախջախիչ հարուածները տակն էր որ ուժից սպառուեց, ընկաւ և իր այսօրուայ կազմալուծեալ վիճակին հասաւ Արեւելքի այս մեծ կարմիր գազանի երկիրը, դատապարտուած ու մահամերձ դրութեան մէջ սպասելով իր սոսկալի վախճանին:

Մենք վեց օրի չափ մնացինք Քոչաննէսումն և հիւպատոսը շարունակ տեղակցում էր Մար-Շիմոնի հետ, տեղեկութիւններ հաւաքելով լեռնական ասորիների ներկայ դրութեան ու վիճակի մասին և ծանօթանալով այդ Կորդուաց անառիկ անեղ սարերի խորշերում դարերից իվեր ամփոփուած ու կղզիացեալ քրդական վայրագ ցեղերից ամեն կողմից շրջապատուած ու պաշարուած հինաւուրց մեծ ազգի մնացորդ բեկորների հետաքրքրական պատմութեան, կեանքի, սովորութեանց, նիստ ու կացի, զրադմանց, նրանց ցաւերի և պահանջած՝ անմիջական դարմանների խնդրոցն հետ: Իբր հետեանք Գէրգըն Գլէյթընի այս տեսակցութեան հետեանքն էր որ մի քանի տարի յետոյ Կէնտհրքըրի արքեպիսկոպոսը մի առանձին միսիա ուղարկեց լեռնական ասորոց մէջ գործելու, ընծայելով Մար-Շիմոնին մի մամուլ իր ամբողջ կազմով, կաղմարարութիւն և այլ արհեստական գործիներ. սակայն անգլիական այս միսիան հնթարկուեց սուլթանի կատաղի հակառակութեան ու հալածանքին և, սորինների մինիստրութիւնից պաշտպանութիւն չգտնելով, վերջապէս ստիպուեց փոխադրուել Ուրմի, ուր շարունակում է իր գործունէութիւնը ի վերածնութիւն այդ ժողովուրդին:

Ակննատես:

(Կը շարունակուի)